

9404



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«03» 09 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 173 - 24

Նախաձեռնող՝

«ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԱՆԻ» ՍՊԸ  
Կոտայքի մարզ, Մրզաշեն 7 փող., 6 շ., բն. 7

Գործունեությունը՝

Նորամարգ-Հրազդանի  
ավազների հանքավայրի արդյունահանում  
Արարատի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 173 - 24

«03» սեպտեմբերի 2024թ.

Արարատի մարզի Նորամարգ-Հրազդանի ավազների  
հանքավայրի արդյունահանում

Նախաձեռնող՝	«ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԱՆԻ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ՇՄԱԳ հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Մասիս և Արտաշատ համայնքներ Նորամարգ և Հովտաշեն բնակավայրեր

**Ներածական մաս.** Փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ հաշվետվությամբ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Հրազդան գետի ստորին հոսանքի ոլորաններում պարփակված Նորամարգ-Հրազդանի ավազների հանքավայրում: Տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Հովտաշեն և Նորամարգ գյուղերի միջև, բնակավայրերից 0.3-0.8 կմ հեռավորությունների վրա և կապված է վերջիններիս հետ ասֆալտապատ ավտոճանապարհներով: Աշխարհագրորեն այն տեղադրված է Արարատյան դաշտավայրի կենտրոնական մասում, Արաքս և Հրազդան գետերի հատման վայրից մոտ 5 կմ դեպի հյուսիս, ծովի մաարդակից մոտ 825 մետր բացարձակ բարձրության վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի, 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ: Հանքավայրի պաշարները հաստատվել են ՏԿԵ նախարարի 2023թ. հուլիսի 17-ի թիվ 1391-Ա հրամանով: Հաշվարկված մարող պաշարները կազմում են 692.7 հազ մ<sup>3</sup>, կորզվող պաշարները՝ 583.0 հազ.մ<sup>3</sup>՝ համապատասխանաբար 114.0 հազ.մ<sup>3</sup> և 469 հազ. մ<sup>3</sup> թիվ 1-Բ և թիվ 2-Ա բլոկներից: Համաձայն հանքավայրի օգտակար հանածոյի նմուշների լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների արդյունքների՝ հանքավայրում 5 մմ-ից բարձր ֆրակցիան (խիճը)՝ 5.3 % է, ավազը՝ 94.7 %: Ավազները բավարարում են ԳՈՍՏ-8736-2014 «Ավազ շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջներին և կարող են օգտագործվել որպես լցանյութ ծանր բետոնի, ինչպես նաև ճանապարհային այլ տեսակի շինարարական աշխատանքների համար: Հրազդան գետի ներհոսքի շնորհիվ հանքավայրի պաշարների վերականգնում հնարավոր չէ, քանի որ հանքավայրի տարածքը Հրազդան գետի կողմից շրջափակված է ինժեներական կառույցներով, որոնք արգելափակում են գետի ջրերի մուտքը:





Հանքավայրի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

1-ին տեղամաս՝ Հյուսիսային լայնության 40° 01' 40" Արևելյան երկայնության 44° 26' 36" 2-րդ տեղամաս՝ Հյուսիսային լայնության 40° 01' 33" Արևելյան երկայնության 44° 26' 42":  
Արևմտյան Կանի ՍՊԸ կողմից հայցվող տարածքի 2 տեղամասերի կոորդինատները (ARM-WGS համակարգով)

ՏԵՂԱՄԱՍ - 1		
Հ/Հ	Կոորդինատները	
	X	Y
1	4432744,9821	8452412,5836
2	4432755,4715	8452416,3287
3	4432798,2780	8452422,8982
4	4432771,6409	8452236,5100
5	4432655,8097	8452227,7372
6	4432658,6499	8452244,9504
7	4432696,7757	8452301,1362
8	4432705,5900	8452301,7600
9	4432700,5178	8452332,1045
10	4432702,0239	8452359,1134
ՏԵՂԱՄԱՍ - 2		
1	4432323,4785	8452375,8327
2	4432322,1262	8452372,6557
3	4432321,4194	8452369,7475
4	4432321,2100	8452365,5300
5	4432322,9651	8452358,4797
6	4432330,9817	8452349,1670
7	4432340,7800	8452344,4300
8	4432347,7962	8452343,4795
9	4432356,6373	8452344,7596
10	4432361,5200	8452347,5400
11	4432366,2200	8452351,6862
12	4432375,3700	8452367,1400
13	4432387,6387	8452384,2881
14	4432395,6968	8452392,9673
15	4432407,1300	8452402,6200
16	4432417,2200	8452409,0200
17	4432440,3981	8452419,5646
18	4432457,0960	8452429,5613
19	4432493,1111	8452418,1065





20	4432505,0700	8452408,1200
21	4432601,7499	8452365,9601
22	4432610,6265	8452366,2155
23	4432619,9816	8452373,2981
24	4432622,6400	8452381,7700
25	4432619,5500	8452425,1300
26	4432619,7400	8452444,5400
27	4432625,1300	8452470,7000
28	4432636,8600	8452500,0700
29	4432640,4964	8452511,7616
30	4432651,5534	8452574,9920
31	4432567,1091	8452566,1269
32	4432396,5337	8452514,1042

**Նկարագրական մաս.** Նորամարգ-Հրազդանի ավազների հանքավայրի շահագործումը նախատեսվում է 2 առանձին բացահանքերով: Հայցվող տարածքը 2 տեղամասերում կազմում է՝  $1.5866\text{հա}+4.1460\text{հա}=5.7326$  հա, որից 2.0 հա մակերեսով տարածքը գտնվում է Մասիս համայնքի Նորամարգ բնակավայրի վարչական սահմաններում, իսկ 5.1 հա-ն՝ Արտաշատ համայնքի Հովտաշեն վարչական սահմաններում (սեփականության վկայականները՝ № 14072023-03-0089 և № 14072023-03-0049): Հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունները՝ խոտհարք և վարելահող: Տարածքը ծածկված է 0.6-2.0 մետր հզորությամբ բուսահողային, կավավազային շերտով և 0.5-1.2 մետր հզորությամբ կավային շերտով:

Համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, «Քաղաքաշինության նախարարություն, 2005) տեղամասում և դրա հարակից շրջանում սողանքային երևույթներ չեն արձանագրվել:

Հանքավայրի պաշարների արդյունահանումը նախատեսվում է 9 տարի: Շահագործումը նախատեսվում է սկսել 2-րդ տեղամասից: Վարարման շրջանում Հրազդան գետի ջրերի հոսքը հանքավայրի տարածք չի սպասվում, քանի որ գետի երկայնքով առկա են արգելապատնեշներ և դրենաժային խորը փորվածքներ, ինչը թույլ է տալիս բացառել վարարման հետ կապված բոլոր խնդիրները: Բնապահպանական և անվտանգային նկատառումներից ելնելով և հաշվի առնելով, որ տարածքն ընդգրկում է Հրազդան գետի էկոտոնի հատվածը, բացահանքերը եզրագծվել են Հրազդան գետից նվազագույնը 20 մետր հեռավորությամբ:

Բացահանք 1-ը բնութագրող պարամետրերն են.

- մակերեսը պաշարների եզրագծում՝ բացահանքի սահմաններում՝ 15751մ<sup>2</sup>,
- մակերեսը 2.03մ խորությունում՝ մակաբացման հատակում՝ 1307մ<sup>2</sup>,
- մակերեսը բացահանքի հատակում՝ 9229մ<sup>2</sup>,
- մակաբացման ապարների միջին հզորությունը՝ 2.03 մետր
- Եռանկյուն պրիզմայի տեսքի՝ մակաբացման ապարների ծավալը բացահանքի եզրագծի բնամասում կկազմի 1.3հազ. մ<sup>3</sup>:

Բացահանք 2 բնութագրող պարամետրերն են.





- մակերեսը պաշարների եզրագծում՝ բացհանքի սահմաններում՝ 41325մ<sup>2</sup>,
- մակերեսը 1.73մ խորությունում՝ մակաբացման հատակում՝ 1564 մ<sup>2</sup>,
- մակերեսը բացհանքի հատակում՝ 28094 մ<sup>2</sup>,
- մակաբացման ապարների միջին հզորությունը՝ 1.73 մետր
- մակաբացման ապարների ծավալը բացհանքի եզրագծի բնամասում՝ 1.3 հազ:

Նախագծով Նորամարգ-Հրազդանի ավազների հանքավայրում տարեկան նախատեսվում է արդյունահանել 60.000 մ<sup>3</sup> օգտակար հանածո: Արդյունահանման աշխատանքներ իրականացնելու համար նոր ճանապարհների շինարարություն չի նախատեսվում, օգտագործվելու են գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները: Շահագործումը նախատեսվում է, օգտակար հանածոյի ամբողջ հզորությամբ, մեկական հանքաստիճանով, կատարելով մակերեսային մակաբացում: Բացհանքերի հատակները կընդունեն հաշվարկային բլոկների հատակի մակերեսի ձևը, իսկ բորտերը կունենան 45° թեքություն: Արդյունահանման ժամանակ հումքի կորուստները կարող են կազմել մոտ 22 %, քանի որ դրանք կմնան կողային եզրերում: Ավազների արդյունահանումը նախատեսվում է ավազամղող պոմպի, իսկ մակաբացման ապարների հեռացումը՝ էքսկավատորի միջոցով: Ըստ լաբորատոր հետազոտությունների արդյունքների՝ հումքը պիտանի է կիրառել շինարարական աշխատանքներում առանց լվացման, սակայն ինքնին ստացվում է լվացում, քանի որ հումքը գտնվում է ջրողողված վիճակում:

Լեռնային աշխատանքները բացահանքում նախատեսվում է կատարել մինչև 13.2մ բարձրությամբ հանքաստիճանով՝ շարժվելով գիպսմետրիկ ամենաբարձր մասից դեպի խորքը: Ավազակուտակների մշակման համար ընդունված է ընդերկայնական ընթացքաշերտերով միակողանի խորացող մշակման համակարգ: Ելնելով օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկություններից՝ ավազային զանգվածի հանույթը նախատեսվում է կատարել ավազամղիչ պոմպի միջոցով: Մաղել-տեսակավորելուց, բարձման աշխատանքներից հետո մոտ 400 մ<sup>2</sup> մակերեսով բետոնե սալիկապատված հումքի պահեստում ջրաքամվելուց հետո կատարվում է բարձում: Ելնելով ավազների ֆիզիկամեխանիկական հատկություններից՝ նախատեսվում է օգտակար հանածոյի բարձումը տրանսպորտային միջոցների մեջ կատարել շերտի 30 մ<sup>3</sup> տարողությամբ ապարաբարձիչի միջոցով: Տեղամասերում հումքի տեղափոխումը մինչև պահեստ նախատեսվում է կատարել ավազամղիչ պոմպի միջոցով՝ 200 մմ տրամագծի խողովակաշարով: Մակաբացման ապարների տեղափոխումը մինչև ներքին լցակույտեր նախատեսվում է կատարել 1 ինքնաթափի միջոցով: Հերթափոխում մակաբացման ապարների հեռացման ծավալը միջինում կազմում է 64.1 մ<sup>3</sup>:

Մակաբացման ապարները սկզբում նախատեսվում է ժամանակավորապես կուտակել տեղամասի հարավային մասում, որպես առանձին թափոնակույտ՝ 2-3 ամիս ժամկետով, այնուհետև տեղամասի մնացած մասի մակաբացման ապարների հետ միասին աստիճանաբար տեղավորել նոր արդյունահանված տարածքներում՝ շահագործումը սկսելուց 2-3 ամսից սկսած: 2-րդ և հաջորդ տարիներին շահագործումը կշարունակվի հյուսիսային հատվածից: Մոտ 70.2 հազ. մ<sup>3</sup> մակաբացման ապարները կտեղավորվեն միջինը 14.1մ խորությամբ բացհանքի սահմաններում մոտ 5000 մ<sup>2</sup> մակերեսի վրա, որի վերականգնումից հետո կենթարկվեն ռեկուլտիվացիայի:

1-ին տեղամասի շահագործումը նախատեսվում է սկսել 8-րդ տարվանից՝ 2-րդ տեղամասի շահագործումից հետո: 1-ին տեղամասում մակերեսի մոտ կեսը խախտված է նախկինում կատարված արդյունահանման աշխատանքներով: Մոտ 30.7 հազ. մ<sup>3</sup> մակաբացման





ապարները կտեղավորվեն միջինը 12.5 մետր խորությամբ բացահանքի սահմաններում մոտ 2500 մ<sup>2</sup> մակերեսի վրա, որի մակերևույթի վերականգնումից հետո կենթարկվեն ռեկուլտիվացիայի: Մակաբացման ապարների ընդհանուր ծավալը կազմում է 103.5 հազ.մ<sup>3</sup>, որից 2.6 հազ. մ<sup>3</sup>-ը կմնա բնամասերում, իսկ 100.9 հազ.մ<sup>3</sup> կտեղափոխվի տեղամասերի արդյունահանված տարածքներ, որտեղ կիրականացվի բացահանքերի խոռոչի մասնակի լցում, մակերևույթի հարթեցում և ռեկուլտիվացիա: Վերականգնվող ընդհանուր մակերեսը կկազմի մոտ 7500մ<sup>2</sup>: Մակաբացման գործակիցները 1 և 2 տեղամասերի համար համապատասխանաբար կազմում են 0.286մ<sup>3</sup>/մ<sup>3</sup> և 0.162 մ<sup>3</sup>/մ<sup>3</sup>, միջինը՝ 0.187մ<sup>3</sup>/մ<sup>3</sup>: Մակաբացման ապարների հեռացման համար բավարար է 15 տ բեռնատարողությամբ 1 ավտոինքնաթափ:

Արդյունահանման արդյունքում առաջացած արտադրական լցակույտի ձևավորումը կրելու է ժամանակավոր բնույթ, պաշարների մեծածավալ կուտակում չի իրականացվելու: Աշխատանքները նման կերպ կազմակերպվելու արդյունքում՝ դրենաժային ջրեր (հանքավայրի ավազների ծակոտկենության շնորհիվ, պոմպի միջոցով մղված հումքի հետ եկած ջուրը արագ կներծծվի), ինժեներաերկրաբանական պայմանների փոփոխություն չի սպասվում: Բացահանքի տարածքը թափվող մթնոլորտային տեղումները ավազների ծակոտկեն հատկության շնորհիվ ներծծվում են խորքերը և ջրահեռացման համակարգերի ստեղծում չի նախատեսվում:

**Պարճառաքանական մաս.** Հաշվետվության և նախագծի շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, նախատեսվել է գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսումը և դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումներ, դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմներ: Թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա լինելու է գրեթե զրոյական, քանի որ մակաբացման ապարները շահագործման աշխատանքների ընթացքում օգտագործվելու են բացահանքերը մասամբ լցնելու համար, դա տևելու է միայն յուրաքանչյուր բացահանքի բացումից 2-3 ամիս անց, աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նավթամթերքները և քսայուղերը տարածք են ներկրվելու հատուկ տակառներով՝ տեխնիկաները միանգամից լիցքավորելու համար: Աշխատանքների ավարտից հետո քսայուղերի մնացորդները փակ անթափանց տարաներով տեղափոխվելու և հանձնվելու են բանեցված քսայուղերի և նավթամթերքի հավաքման կետ:

Նախագծով նախատեսվում է խախտված հողերի լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնման միջոցառումներ՝ բացահանքի լցում մակաբացման ապարներով, դրանց մակերեսների հարթեցում և ամրացում՝ հանված և պահեստավորված հողաբուսային զանգվածով: Կենսաբանական վերականգնման միջոցառումներից կկատարվի ցանքս: Դիտարկվում է նաև հետագայում տվյալ տարածքներում ձկնաբուծարան հիմնելու գաղափարը:

Նախատեսվում է 2 տեղամասերով ավազների արդյունահանմանը զուգահեռ՝ ընդհանուր շուրջ 107.0հազ. մ<sup>3</sup> մակաբացման շերտերի և բուսահողային զանգվածների տեղափոխում թիվ 1 տեղամասի արդյունահանված տարածք, որտեղ կիրականացվի բացահանքի խոռոչի լցում, մակերևույթի հարթեցում և ռեկուլտիվացիա: Վերականգնվող ընդհանուր մակերեսը կկազմի մոտ 8000 մ<sup>2</sup>: Ընդհանուր մակերեսի ռեկուլտիվացիոն աշխատանքների





իրականացման համար անհրաժեշտ գումարը լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնման համար կազմում է 1081.1 հազ. դրամ: Տվյալ գումարը ընկերության կողմից հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին՝ ՀՀ կառավարության 23.08.2012թ.-ի N 1079-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն: Արդյունահանման աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կառավարման համար (հիմնականում տեղափոխման ծախսեր) նախատեսվում է ֆինանսական միջոցներ: Նախատեսվում է 2 տեղամասերով ավազների արդյունահանմանը զուգահեռ՝ ընդհանուր շուրջ 100.9 հազ. մ<sup>3</sup> մակաբացման շերտերի և բուսահողային զանգվածների տեղափոխում տեղամասերի արդյունահանված տարածքներ, որտեղ կիրականացվի բացահանքերի խոռոչի մասնակի լցում, մակերևույթի հարթեցում և ռեկուլտիվացիա: Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշման, պահպանման, նպատակային և արդյունավետ օգտագործման հարցերով ընկերությունն առաջնորդվելու է ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն և 2011թ.-ի սեպտեմբերի 8-ի N1396-Ն որոշումներով սահմանված պահանջներով:

**Եզրափակիչ մաս.** Հանրային լուսմները իրականացվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արտաշատ համայնքի Հովտաշեն և Մասիս համայնքի Նորամարզ բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրում: Հանրային լուսմների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական ամբողջ գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Արարատի մարզպետարանը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում, շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության համաձայն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կլինի թույլատրելի նորմայի սահմաններում:

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով՝ մշտադիտարկումների իրականացման համար ընկերությունը նախատեսում է տարեկան հատկացնել 130 000 դրամ:

### **Պարտադիր կատարման ենթակա պահանջներ**

1. Գործունեության իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխելուց հետո:
2. Արդյունահանման աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է բացահանքերի եզրագծերից պահպանել Հրազդան գետի ջրապահպան էկոտոնի տարածքների համար նախագծով ամրագրված և հիմնավորված՝ 20 մետր հեռավորությունը՝ պահպանելու նպատակով ջրամերձ և ավիամերձ առավել խոցելի տարածքները:
3. Բացառել տեխնիկական սարքավորումների շահագործման հետևանքով մակերևույթային, ստորգետնյա ջրերի և հողի աղտոտումը նավթամթերքներով:
4. Արդյունահանման աշխատանքների ընթացքում պահպանել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված մոնիթորինգի պլանով սահմանված միջոցառումները:





5. Հանքավայրի շահագործման ընթացքում և դրա ավարտից հետո նախատեսել անվտանգության ապահովման միջոցառումներ և տարածքի ցանկապատում:

### ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Նորամարգ-Հրազդանի ավազների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

Սուսաննա Անտոնյան